«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-1217-16.12.2025-ՏՏԳԾ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (այսուհետ՝ Նախագիծ) և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ հայտնում է հետևյալը.

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 70-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում, բացառությամբ 1-ին կետով նախատեսված դեպքի, համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարը, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում նաև համայնքի ղեկավարի պաշտոնակատարը կամ աշխատակազմի քարտուղարը կազմում են ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ավագանու անդամի հրաժարականի մասին դիմումն ստանալուց հետո՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում, կազմում է ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին արձանագրություն:»:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ գործնականում հնարավոր է ստեղծվի մի իրավիճակ, երբ ներկայացված հրաժարականի դիմումն ստանալուց հետո համայնքի ղեկավարը (կամ պաշտոնակատարը) անմիջապես (եռօրյա ժամկետը չլրացած) արձանագրության հետ միասին այն ներկայացնի ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, իսկ վերջինս անմիջապես կազմի լիազորությունների դադարեցման մասին արձանագրություն, ինչն ավագանու անդամին կզրկի եռօրյա ժամկետում իր դիմումը հետ վերցնելու Նախագծով նախատեսվող իրավունքից:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3.1-ին մասով համանման կարգավորում է նախատեսված համայնքի ղեկավարի համար, մասնավորապես՝ «Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում համայնքի ղեկավարը հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում կարող է հետ վերցնել: Համայնքի ղեկավարի կողմից հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում հետ չվերցնելու դեպքում աշխատակազմի քարտուղարի կողմից համայնքի ղեկավարի հրաժարականի մասին պատշաճ ձևով ծանուցվելուց հետո համայնքի ավագանին եռօրյա ժամկետում կազմում է համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին արձանագրություն: Արձանագրություն չկազմվելու դեպքում համայնքի ղեկավարի լիազորություններն օրենքի

ուժով համարվում են վաղաժամկետ դադարեցված: Համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրությունը չկազմվելու մասին հաղորդումը աշխատակազմի քարտուղարը ներկայացնում է մարզպետարան»:

Հաշվի առնելով սույն կարգավորումը՝ առաջարկում ենք Նախագծով նախատեսվող դրույթը դիտարկել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3.1-ին մասի համատեքստում, մասնավորապես՝ առաջարկում ենք աշխատակազմի քարտուղարի կողմից լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին արձանագրությունը կազմել ավագանու անդամի կողմից իր դիմումը եռօրյա ժամկետում հետ չվերցնելու դեպքում:

Հարկ ենք համարում նշել նաև, որ լրացուցիչ հստակեցման և պարզաբանման կարիք ունի այն հանգամանքը, թե Նախագծով նախատեսված իրավակարգավորումն ինչու՞ չի դիտարկվել մեծամասնական ընտրակարգով ընտրված ավագանու անդամների հրաժարականի դեպքում:

Նախագծով նախատեսված համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու անդամի հրաժարականի վերաբերյալ առաջարկությունը վերաբերում է նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծին: